



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

10634

10635

10636

10637

10638

891.99

m-26

ԲԵՐԿՐԱՆՔ ՈՒ ՎԻՇՏՔ



10636

այ ԳԱՐԻԷԼ ՆԵՐՇԱՊՈՒՀ


ՅՅ1.99

Բ Ե Ր Կ Ր Ա Ն Ք
ՈՒ
Վ Ի Շ Տ Ք

Հեղինակին ստորագրութիւնը չկրող օրինակք
անվաւեր են:

Գ Ն

ՈՎ ՈՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՈՎ ԳՐԻՉ ՈՒՆԻ
ՀԱՅՐԵՆԻ * * * * *



ՀՐԱՄԱՆԱԻ ՄԷՍՐԻՖԻ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՅ Մ. ԱՇԽԱՆ
ՍԻՄՊԵՐԷԼԻ ԻԱՆ ԴԵՏԵՑԱՐԿ ԹԻՒ 35
1881

Վ Ի Շ Տ Ք

1850ի ատենները Իւսկիւտարու Յէնի-Մահալլէի վարժարանը Թուաբանութեան և Գաղղիերէնի դասատուի մը պէտք ունենալով, Սամաթիոյ վարժարանի հողաբարձութիւնը զիս այս պաշտօնին ուղարկեց ճիշդ այն ատեն, ուր Գիտութեան Արևին շուրջը պըտըտող մոլորակս դրեթէ իր վեցերորդ շրջանը կը կատարէր ուսման անփորձ ոլորտին վրայ և իմ արևս մտացս և սրտիս կազդուրիչ նշոյլ մը, որոշ լոյս մը դեռ չէր հաղորդած, այլ միայն կայծ մ'ուղղած էր անոնց, երբ ես կ'երթայի լուսատու կեդրոն հանդիսանալ այնպիսի աստղերու որք վարսաւոր ըլլալ սկսած էին :

Ճերմակ եղանակին կը յաջորդէր կանանչը, և Մայրս կենացս նաև այդ աստղադէտը իւր յիշողութեան ընական տոմարին մէջ տասն և վեց կը նշանակէր տարիքիս թիւը :

Անփորձութիւնը շուկայի գիտութեան, և ազատամբատութեան սկզբունքը ետութեան հանդիպելով, իբր երկու հակընթաց ելեքտրականութիւն զիս մէկ գիէն միւսը կը նետէին, և բազմաթիւ անձկութիւններէ ետքը Թուաբա-

7726-57

նի անունն ստացայ և ես , որ ինձ համար գրեթէ անլոյս աստղ մ'էի կամ ճշմարիտը ըսելով նորածարծ կայծ մ'էի , սկսայ նկատուիլ Միացեալ Նահանգաց (սիրուն անուն) Ֆիսատելֆիոյ մէջ կառուցած սքանչելի ելեքտրական փարոսը , քննելի հրաշքի կ'երևայի ուսման վառարանէն դուրս ինկած ատենս , վասն զի խաւարը խիստ թանձր էր և ընդհան ուր :

Աթենասայ տաճարին հայկական դմբէթը սկսաւ զարգարուիլ այսպիսի նոր փողփողուն կանխեղներով , և ազգային անհատք տեանելով լուսոյ գեղեցկութիւնը , ըսկսան ուրախութեամբ ազադակել Աճյս , Աճյս . իսկ մենք մէկ քանիներու բանիւ երախտագիտութենէն միամտաբար յուսադրուելով , բարոյապէս իբր վարձագրեալ , իսկ նիւթապէտ անվարձ կը չարչարուէինք և տակաւին կը չարչարուինք և պատճառը խիստ հաճոյական է :

Երբեմն Աթենասայ քուրմերը գաւազան ունէին և չուղեւելով լոյսը բռնութեան միջոցներով տարածել , յանձնեցին գաւազանը Մեկենասի պաշտօնեաներուն , բայց ասոնք չկրնայով գիտնալ թէ ինչ է այն , շամփուր կարծեցին և սկսան խորովիլ վարժապետաց սիրտերը , խորովէք խիստ համեղ և հաճոյական պատրաստելով , իրենք ու հայրեր սկսան պաշտել զայն Բաքոսի տաճարին մէջ մտահանգստի ճերմակ ջրով , կարմիր բաժակներով և սիկառի բուրվառով :

Նուրբ և զարգարուն վայրենութիւն (բացառութիւն) : Այս կիզման ճենճերը իմ սրտիս երկինքը կ'ամպրտէր և այդ դիզուած ամպերը փայլակ կը հանէին , որուն կայ-

ծակը ողջակէզ սրտիս մոխրոցը և փլատակացը տակ պահուած խանդին երբեմն երբեմն խանձ հաղորդելով կարծարծեր զայն , թէ եւ ի մլաս սրտիս . սակայն ասոր ծրխնելոյզէն ելած հառաչները սակաւիկ ինչ անգորրութիւն կուտային իրեն :

Այդ ճենճերը ճերմակին վրայ հարկաւ սեւ հետքեր պիտի ձգէր , որք եթէ գրագետի բերնէն ելած ըլլային , օրինաւոր նկարներ , չքնաղ պատկերներ կրնային ըլլալ , սակայն խմբներս լոկ բիծերէ , պարզ գիծերէ տարբերութիւն չունին (1) :

Հասակիս և մտքիս տհասութեան ժամանակն իսկ մասնաւոր իղձ մ'ունենալով բանաստեղծութեան , չքաւոր տողեր կը կըցկղցէի և եթէ այն ատեն տղայոց աւիւներուն վրայ ըլլուելիք ուշադրութիւնը նորածին բնազդման գեռաթիւ թռիչներուն նեցուկ ըլլար , այսօր իմ մտաց կը տուցով և գրչիս մազիչներովը կարող կըլլայի ընտիր նիւթեր հայթայթել ու կրել գրականութեան շէնքին ի հաստատութիւն :

Սակայն ՈՎ ՈՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՈՎ ԳՐԻՉ ՈՒՆԻ , ՀԱՅՐԵՆԻ [և ան իմ այս սիրելի սկզբունքս էր որ համարձակութիւն տուաւ , և պիտի տայ գրելու և հրատարակելու (1) :

Վարժապետութեանս սկիզբէն (դժբաղդ ժամ) մինչև այսօր եռեսուն տարիներ սահուն գլորեցան . եռեսուն դա-

(1) Ասոնք հետզհետե պիտի հրատարակուին :

բուններ ծիլ ծիլ ծաղկեցան , բայց վարժապետին կեանքը մնաց անապատ , քառորդ դարէն աւելի է որ այդ աւանապատին մէջ դեգերեցայ , երբեմն երբեմն նստելով անոր ապականիչ աւազներուն դէզ դէզ կառուցած բլրոց հակարեւ ստորտը , շրջելով շրջեցայ , վազելով վազեցի և որոնեցի , բայց ի դուր , զի ազգային դաստիարակութեան աշխարհին անապատները չունին Ովասիս՝ դժբաղդներու այդ վերջին հանգրուանը . վերջապէս կանգ առի այդ տուտրիչ չոպին դէմ և զգեանելով բոլորովին բեկանել ուզեցի յուսոյ կազմածը , որուն կենսունակութիւնը հասակէս առաջ ուսման մատղաշ խուզարկուք խլեցին :

Բայց զարմանալի են նախախնամութեան գործերը . այդ աւազին մէջ գթութիւն կար , զի բոլորովին չջախջախեցաւ յուսոյ այդ ամանը :

Այն թշուառը , որ ապրելու միտք ունի , պիտի չարչարուի :

Հայ ազգին վարժապետութեան մէջ երբեմն ցնորական , երբեմն յուսադրական , խիստ քիչ անգամ իրաւացի քաղցրութիւն մը կայ :

Անկեղծ և անմեղ սրտեր , միամիտ հոգիներ ունին զիմացդ , որոց երախտագիտութեան խոստումներով կը կարծես ունենալ ապագայ մեծ դրամազուլս մը , և երբ հասակնին մեծնալով կրից ճանկերն ալ մեծնան , կ'ըսկին իրենց ճարակը կամ որսը գտնելու ետեւէ ըլլալ . ահա ասոնք այն անապատին երկինքէն անցնող ուղեւորներն են որք կը ճռուողեն և զու ալ կը կարծես թէ կը խոստանան , որք

ստուեր կը ձգեն , կարծես թէ պիտի դովացնեն քչիկ մը , յիշուի այս ցոյցերը անկեղծ են , բայց անոնց իրականութիւնը խիստ շատ անգամ անստոյգ է և այնպէս վաղանցիկ են , ինչպէս երկվայրկեանը յախտնի դանդաղութեան առջև :

Այս ուղեւորներէն ոմանք , կը մոլորին ուրիշ առաւպարներու մէջ , ոմանց կենաց թելերը Ատրովպեայ մկրատին փորձութեան վաղ կը պատահին , ոմանք ստամբքսին բռնութիւնը զսպելու և իրենց ծնողաց թշուառութիւնը մխթարելու համար իբր մեքենայ կը դբաղին , ոմանք բարեբեր վայրի մը մէջ քաղցր ի ճաշակ , լաւ յախորժակ դոհերու վրայ կը սաւառնին , ոմանք այրի Աստղիկան քնքուշ մանկան կնքահայրութիւն կ'ընեն , ոմանք կարմիր վարդին խանդը , ճերմակ շուշանին հասակը , ծածկաբոյր մանիշակին խոնարհութիւնը , կանաչ կապուցին խստութիւնը , խստուտիկ մնխակին տենչը , հեղիկ յասմիկին առանձնութիւնը տեսնելով կը շուարին և ընտրութիւն չեն կրնար ընել , ոմանք անուշ ի բոյր , քաջ ի հրապոյր հոգիներու կրնկերակցին , ոմանք ձգող 'ի համբոյր , կ'ըր 'ի պարոյր մետաղներու գեղին ու ճերմակ գոյներուն զուարթութեան առջև կ'ոստոստեն . և ոմանք ալ անգութ և անխնայ անգեղ նման՝ քու մարդասիրութենէդ քաջալերեալ , յանդէտս կուրծդ կը կրծեն ի սպառումն , այս ընթացքներէն մէկ քանին թէև բնական են և քիչ մեղադրելի , սակայն մնացածները բարոյական դաստիարակութեան պակասութենէն յառաջ կուգան , զի ծնողքներ կան և Հոգաբարձութեան անդամներ որ իրենց դաւակնե-

ըր և աշակերտները կը մխիթարեն ըսելով, «տղա՛ս, այդ վարժապետէդ բաժնուեղուդ համար ինչո՞ւ կուլամ, համարէ թէ մեռած է :»

Ո՛վ սոսկալի մխիթարութիւն, տղան առ ժամն բաժնուելուն վրայ արդէն կուլայ, իսկ հայրը կամ Հոգաբարձուն ի սպառ բաժանմամբ կը մխիթարէ :

ԲԵՐԿՐԱՆՎ

Այսչափ օրեր կը թուլան Երկով զբաղեցայ, ունեցայ բազմաթիւ աշակերտներ և աշակերտուհիներ որոց ամէքն ալ ինձ մարդասիրական ցոյցեր ընծայեցին, զիս յարգեցին և սիրեցին իրենց պատանեկութեան և երիտասարդութեան իբր բարեկամը և բարերարը :

Եւ եթէ յուսոյ ամանը չբեկաւ, պատճառը այն էր թէ երկու Աղնիւ և Ազգասէր ընտանեաց դասերը, Սաթենիկ Մալեզեան և Խորիկ Ֆրէնկեան բարեկիրթ օրիորդները իրենց երախտագիտութիւնը գործով յայտնելու համար մտաբերած են դրութեանցս այս մասը հրատարակել տալ և իրենց այս նպատակին հասնելու համար ձեռագործներ շինելով վիճակահանութեան կը դնեն որուն թուոց տետրակին վրայ Բարեխորժական նպատակի մը համար գրելով կըսկըսին ցրուել և հաւաքել :

Օրիորդ Մալեզեան նամակաւ մը Լճաբա թիւեր կիրակէ իր մօրաբորջ մեծանուն Ֆրեսըզլեան Սարգիս էֆ. վաճառասանի կողակից Աղնուուհի Զապէլ տիկնոջ ուսկից հետեւեալ

պատասխանը կուգայ . «Սիրով ստացայ 19 Նոյեմբեր ամսաթուով սիրազիրդ, նոյնպէս և . . . Ներշապուհի դրուածքնեքը տպագրել տալու համար վիճակահանութեանդ ներփակեալ ցուցակը, շատ կը դովեմ Ձեր բարեգործական նպատակը և կը բարեմաղթեմ որ արդիւնաւոր ըլլայ : Ներփակեալ պիտի գտնէք թուղթ մը . . . այս թուղթը ցուցնելով կրնաք ընդունիլ թղթաբեղէն 2 անգղ. ոսկի : Ուստի աղնիւ Օրիորդ . հաճեցէք յանձնել իմ սիրելի դասատուիս ամենաչընչին նուէրս և կը յուսամ որ ուրիշ անգամ աւելի մեծ ծառայութիւն մ'ընելու բարեբաղդութիւնը կ'ունենամ . . . Այս առթիւ կը խնդրեմ նաեւ որ իմ աշակերտական ակնածանօք յարգանքներս իրեն մատուցանել հաճիք : »

Ահա հովանի մը զոր կը ձգեն երկնքէն յիշեալ սիրասուն աշակերտուհիներս և ուսումնասէր և խոստմնապահ Տիկինը քըչիկ մը զովանալու համար, և երախտագիտութեան չքնաղ օրինակ մը կընծայեն, ոչ միայն իրենց ըրած նպատակը, այլ նաեւ այն բարեխորժութեամբ զոր գրին ի քաջակերութիւն իրենց դասատուին և որով հաստատեցին այն առածը թէ կամքը դործ է :

Եւ ահա հրատարակեալ և հրատարակելի տետրակներ զոր կը դնեմ մտացս ու սրտիս որդւոց և թոռանց (*) առջև և ապահով եմ որ դնելով անոնցմէ մէկ մէկ օրինակ, կը փութան արդեամբ յայտնել ինչ որ բանիւ կը խոստա-

(*) Զի սկսած եմ արդ աշակերտացս և աշակերտուհեացս զանկներուն դասատուութիւն ընելու :

նային առ երի գրասեղանին, զի միջոցը զխրանամբոյր է և սկզբունքը օրինակելի : Եւ ես այն ատեն պիտի ըսեմ թէ յիրաւի, թէ եւ ազգային դաստիարակութեան ապաւերկ սեղանին վրայ կուրծս զոնուեցաւ, սակայն անոր մոխրներէն ծնան Փիւնիկէներ, որոց նորափետուր թեւերուն շուքին տակ պիտի հովանաւորուի տոչորեալ ձակասս :

1880 Ռեկ. 14



ՔԵՐԿՐԱՆՔ ՈՒ ՎԻՅՏՔ



Ա. Ն. Ր. Ա. Ռ. Ա. Մ

ՄՕՐՍ ԿԵՆԱՅ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

1877 ՄԱՐՏ 25

1

ՆԵՐԿԱՅ

ՄՄՅՐ ԻՄ

Ինչո՞ւ լուռ կաս, է՞ր շուրթերդ շարժուն չեն,
Որ մանկութեանս հազար համբոյր տուած են :
Է՞ր չը խօսիր այդ քու լեզուն խրատ մօր,
Որ մարդկութեան պարտքեր անկեց սրտիս խոր :
Այդ աչերդ ինչո՞ւ դոց են, մոռնա՞ս զիս,
Տե՛ս որդիդ եմ, գրկացս մէջն ես, դժա՛ յիս :
Տու՛ր ինձ ձեռքերդ, համբոյրներ տամ, օժեալ են .
Այդ ձեռքերդ խանձարուրքս կապած են :
Դու՛ որ արթուն՝ գիշեր ցերեկ հսկէիր,
Եւ քու կուրծքդ որդւոցս վրայ զոհէիր,
Դու որ բնաւ չունէիր քուն, ոչ դադար,
Հիմա ինչո՞ւ անհողութեան ես տիպար :

Դու որ տանըս կանթեղն էիր ջինջ , պայծառ ,
 Մինչև հիմա պըլպըլացիր մշտավառ :
 Ո՛ր անգուլթն էր , որ պիղծ շուրջն էր , որ փըշեց ,
 Եւ պատրոյկիդ նուիրական կայծ մարեց :
 Մա՛յր իմ , այսպէս պիտի մընաս , իրա՞ւ է ,
 Մա՛յր իմ , զարթի՛ր , մայրիկ քուն ես , այնպէ՛ս չէ .
 Ա՛հա որդիդ ոտիցդ քով ծունը դրած ,
 Զթողուլ զինք կը պաղատի ձեռնամած :
 Անշա՛րժ շրթեր , անխօ՛ս լեզու , գո՛ց աչեր ,
 Մօր մը գորով յաւէ՛ա յիւր ծոց չկըբեր :

2

ԱՆՅԵԱԼ

Մա՛յր բարերար , մինչդեռ էի պատանի ,
 Կորուսիր հայրս՝ քու ամուսին սիրելի :
 Կարօտութիւնք պարտք մ՛ալ վրադ բարդեցին ,
 Ասեղն եղաւ հաց ճարելու քու գործին :
 Վեհ էր հողիդ . կրէիր սիրտ համբերող ,
 Տենջայիր թէ սիրտս ոռոգէ ուաման ցօղ :
 Հազար զրկանք քեզի համար փոյթ չէին ,
 Այլ թէ իմ միտք , իմ սիրտ ի լաւ կրթէին :
 Զմեռն զիս ֆերձեկէր տակ առած ,
 Դողդոջ ձեռքովդ , մատաղ ձեռքս պինդ բռնած :
 Նախ տանէիր , այգուն՝ էին սուրբ տաճար ,
 Յետոյ դպրոց , ուր իղձերուդ էր համբար :

Գոհ եմ , մա՛յրիկ , գոհ եմ մտացս վիճակէն ,
 Գոհ եմ , զի դու յիմ սիրտ դրիր քո սրտէն :
 Բաղդ շատ ջանաց , հանել բերնէդ մի Տրամունջ ,
 Բայց օրհնութիւն էր հանապազ քո Մրմունջ :
 Արդար , առողջ ըլլալ այս էր քու հաւատ ,
 Այս պատուերով համբուրէիր իմ ճակատ :
 Այսչափ բարեացդ ես քիչ ըրի փոխարէն ,
 Որչափ կրցայ , պակաս չըրի , գիտէ էն :

3

ՆԵՐԿԱՅ

Արևն ելաւ , բացուեցաւ ջինջ առաւօտ .
 Յուզարկաւորք , կղեր դիպուին , մահճիդ մօտ :
 Զքեղ գրկէս բաժնել կուզեն , տանիլ բաց ,
 Տանիլ յայն աաշա , ուր յաճախին ողբ ու լաց :
 Երեց՝ տխուր սկսաւ երգ դամբանի ,
 Կառք քառաթեւ մահուան՝ մարմինդ ընդունի ,
 Ամբոխն տայ իւր քայլերուն դանդաղ երթ ,
 Եկեղեցւոյն զանգակ գուժէ մերթ ընդ մերթ :
 Տաճարին Տէր չունէր նոյն օր ուրիշ տօն ,
 Կղերի դաս շուտ կատարեց իւր պաշտօն :
 Զգիտեմ էր , այդ վսեմ Տան վարդապետ ,
 Մուշ ճառով մը չուզեց յարգել մարց այս պէտ :
 Նա՛ հասանք , մայր , Ակեղդամայ սին դրանդ
 Մտոյդ է աստ . մահդ ինձ թալուկ թուէր անդ :

Ոսկերոտիք հիմ՝ զետեղեն այս դաշտին .
 Հոս փոս մը կայ , այդ մեծ դուռն է Յաւէտին ,
 Այս դռնէն ներս ամեն ինչ կայ ի դադար ,
 Եւ հոս մտնեն թէ՛ մեղաւոր , թէ՛ արդար :
 Ետութեան ջուր յայս վայր դանէ հարթութիւն ,
 Ձինիդ , Նատիր հորիզոնի ուղղութիւն :
 Հոս չկայ իղճ , չկայ կռիւ , արհամարհ ,
 Մի հող քներ թէ չըգիտես ճանապարհ ,
 Ձի այս ուղին ընթացիկ է , չէ բաւիդ ,
 Հէքն ու ճոխն են մի կլորի շաւառիդ :
 Արդ մի՛ ցաւիր թէ ժամկոչն բռնեց պիրկ ,
 Այս վերջինն է աշխարհի քեզ տուած դիրկ :
 Մի՛ շիկնիր , մայր . թէ անզարդ ես , լեր անփոյթ ,
 Այս սև հողը մեր ամենուն է ծածկոյթ :


4

ԱՊԱՌՆԻ

Դառնամ շուտ տուն , մօրս սենեակն էր թափուր ,
 Մայր , մայր գոչեմ . մայր որոնեմ , բայց ի գուր :
 Ո՛ւր ես այժմ , դարձար անդրէն հողդ ի հող :
 Այդ մեծ դռնէն անդին չկայ յուսոյ շող :
 Գիտեմ թէ նիւթք ըստ բնութեան միշտ շարժին ,
 Հող , օդ , ջուր , հուր , անձնիր առաւ իւր բաժին :
 Այդ չորս նիւթին կապն ու հողին ո՛ւր թռաւ ,
 Այդ զորութիւն որո՞ւ մասն է , ո՞վ առաւ :

Հողւոց , ուժից անքննելի մի դումար ,
 Յինքն առաւ զայն , դրաւ յերկնից մեծ կամար :
 Պաշտեմ ըզ՛բեզ , որ պինդ բռնես հանուրց մէտ ,
 Որ կարող ես յաշխարհ փոխել մի փոքր կէտ ,
 Ձի նշմարեմ տանս նախկին իմ կանթեղ .
 Բարեաց կայան դրուած հողին այդ անմեղ :
 Առաջ կայծ մ'էր սրտի մի խոր զետեղուած ,
 Հիմա ըյս մ'է ի վարձ յաստեղս փոխադրուած :
 Վերն ես , Մայր իմ , յաւէտ անքուն դիտես հոս .
 Եւ ես ըզքեզ դիտեմ նաւիս զերթ փարոս .
 Անմահից ծէր անմահութիւն քեզ տուաւ ,
 Յուսանք քեզ դաւ . ըզքեզ դանել , բայց կարգաւ .
 Դու հսկէ զմեզ զերթ պահապան Հրեշտակ .
 Մեք ես աստ օրհնեմք միշտ քու յիշատակ :

ԷՏ-ՊԷԷԷ



ՎԱՐՊ

ԿԱՐՄԻՐ ՎԱՐՊ

Բանաստեղծին միակ զարդ.
Քեզմով տխարին է զուարթ.
Անվարդ՝ թռչնիկն է տրտում.
Եւ ի սուգ կայ սիրոյ մարդ:

ՔՈՒ ԹԵՐԹԵՐ

Բարդ բարդ բոլորուէր,
Ո՛ր բանաստեղծ չէ երգեր,
Տեսքով կարմիր, սրտով բոց
Զո՞ր սոխակը չէ այրեր:

Ի ՔՈ ԲՈՅՐ

Ըզքեզ գտնէ նոյն խակ կոյր.
Ըզքեզ ատողն է պանդոյր.
Թէ ոք մերձի հոտտակ,
Զխըլէր շուտ մի համբոյր:

ԱՅՆ ՔՈՒ ՓՈՒՇ

Պէտք չէ երբէք բերել յուշ,
Թէ զքեզ խայթէ, մ՛ըսեր է՛ւշ
Չես ունենար բընաւ վարդ:
Թէ այս մասին չես ապուշ



ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԹԻՔ ՎԱՐՁԵ

ԳԵՂՋՈՒԿ ԵՒ ԳԵՂՋԿՈՒԼԻՆ



ԳԵՂՋՈՒՅՆ

Գարնան առաւօտ դեղձոյդ է տիպար,
Եկ, գեղեցիկդ իմ, եկ, երթանք ՚ի սար
Գոյն գոյն ծաղիկներ, ծիլ ծիլ կան դալար
Անուշիկ հոտով կեանք բուրեն մեզ յար:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Գարնան քաղցր գալուստ զիս առնէ շուտ յաշտ
Տխուր կերեւայ խնկարոյր այն դաշտ.
Գնա՛ առանձին, անգնութ, այլապաշտ,
Կարէվէր այս սիրտս չէ ընդ քոյդ դեռ հաշտ:

ԳԵՂՋՈՒԿՆ

Գարնան ջինջ արփին քեզմով սիրավառ,
Օ՛ն նաղելիդ իմ, օ՛ն ՚ի սար, ՚ի պար,
Վարդէն զուրկ սոխակ սրգայ անդադար,
Ընդէր սրտիկըդ ինձմէ կայ օտար:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Ա՛ռ քնարդ, գնա՛, ձայն տո՛ւր 'ի սոխակ,
Գեղդեղ և նուազ հարե՛ք ներդաշնակ,
Թո՛ղ զիս մէկ պահիկ, որ լամ՝ միայնակ,
Սյլում նուիրէ՛ քո ծաղկեայ պսակ:

ԳԵՂՋԿՈՒԿՆ

Քնարիս թելեր լարեցի այգուն ,
Ձայն տուի սոխակին՝ սրբոտակցիս սիրուն ,
Թէ՛ դուցէ երգենք զայլ ոք կամ՝ գարուն ,
Բայց նա՛ երգեց վարդ , քնարս քո անուն :

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Ո՛ւր էիր ձմեռն մինչ ես աստ անոք,
Մընայի դարձիդ արտասուաց աչօք .
Ո՛ւր էիր մինչ ես սիրտըս անձկանօք ,
Չուզեցի տեսնել բաց 'ի քէն զայլ ոք :

ԳԵՂՋԿՈՒԿՆ

Տես սա այտերըս, ինչպէս են նիհար,
Տես սա բազուկներս, որչափ են տըկար,
Ըզքեզ յեշերով, բզքեղ անդադար ,
Հոգայի ծնողքս ձեռքերս 'ի տապար :

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Արի պատանիդ քնտասէր զաւակ ,
Արդ բաց են թեւերս գրկել զքեզ արձակ ,
Վարդով բոլորենք մեր սիրոյն պըսակ
Մաղթենք ամենուն այս անկեղծ վիճակ :

ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ



Խաղաղութիւն աշխարհի

Դու միշտ բղխես քու ծոցեդ
Երջանկութիւն սուրբ՝ մարդկանց
Դու յար ծընիս արդանդեդ :

Սուրբ են վայրեր ուր դու կաս ,
Եւ յորս գնանք քո քայլեր .

Աղքատն ու ճոխ՝ հաւասար .
Տաճարիդ մէջ ինկեն Սէր :

Ոչ անդ բազին կամ խորան ,
Ոչ ոսկեկուռ կայ կազմած .
Աչք ու բազուկք վեր յերկինս ,
Պաշտեն զմի Տէր Աստուած :

Սիրտն է բուրվառ աղօթից ,
Լեզուննորա ճիշտ թարգման .
Բանք բերանոյ՝ խունկս անուշ,
Դիմեն յերկնից պարզ խորան :

Թէ և մարդիկ ամենայն
Խորշին քեզմէ և խոյս տան
Իմ թեւերըս միշտ բաց են ,
Քեզ նուիրել օթեւան :



ՓՈՐՈՐԻԿ ՅԱՆՅԱՌԻ

ՊԱՐՄԱՆ ԵՒ ՊԱՐՄԱՆՈՒՀԻ



ՊԱՐՄԱՆՈՒՀԻ

Ընդ սեաւ քօղով անկան երկին և արեգ,
Չանտառն ողջոյն յանկարծ իմն պատեաց մէզ .
Հողմունք դուան, մայրիք դիւր գան ՚ի յերեր,
Ամբարձաւ լոյս, տիրեաց խաւար զերդ գիշեր:

Ձիք եւս արահետ,
Ձի գնացուք յետ .
Ոչ ոք է գիտակ,
Գալ ՚ի մեզ խուզարկ .
Չմշտաց մեզ ճար,
Դու եղեր պատճառ:

ՊԱՐՄԱՆ

Տես, սըլացաւ փայլակ յամպոց թխադէմ
Վահ, ճայթեցոյց զեթեր, եհար բարձանց դէմ
Թնդայ երկին, թնդայ երկիր և սիրաք մեր
Թէ և դողան և արձագանս տան լեռներ

Այլ դու անկասկած,
Լեր յայս մեր արկած .
Ձի են վաղանցիկ,
Վտանդ, փոթորիկ .
Իմ այս է բարբառ,
Ես չեղէ պատճառ:

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ

Ո՛ւր հողմն հեզիկ, ո՛ւր է թռչնոց դայլալիկ,
Սուգ առ անտառս, վայրք այլ ևս չեն քաղցրիկ .
Մօտ է գիշեր, մօտ է անշուշտ և մահ մեր,
Ձի յօշոտիչք կան աստ դաղանք ՚ի դեղեր:

Թէ տունն իցէ հիւզ,
Անդ կեանքն աներկիւզ .
Բաղմաց մեր մօտ նիստ,
Պատճառէ հանդիստ .
Ո՛ւր է իմ կիթառ,
Դու եղեր պատճառ:

ՊԱՐՄԱՆ

Մինչ իսկ փայլակ կամ շիփ ոստոց բերցէ հուր,
Մի երկնչիր, զի մեք երթամք շուտ այլուր .
Կաղին և շուր մեզ կեռակուր լիցի պարզ,
Մինչ այսք անցցեն, աղքատ կենաց առցուք մարզ:

Թէ դայցէ հրէշ,
 Կուրծ իմ քեզ պատնէշ .
 Ունիմ հրացան ,
 Առնեմ ցիր և ցան .
 Պահիկ մի սիրտ առ ,
 Ես չեղէ պատճառ :

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ

Տես յարևմուտս , վա՛շ ինձ , երկինք պարզեցան ,
 Բլուրք , հողմունքնոր փայլ առին հետք բացան .
 Ընդ կոյս բաժակ ծաղկին դեռ նոր 'ի փթիթ ,
 Իբր աղամանդ՝ այս անձրեւի փայլի շիթ :

Թիթեռնիկն 'ի թիւ ,
 Գառնուկն 'ի կայդիւ .
 Քաղցր է բնութիւն ,
 Խայտաց մեր աւիւն .
 Չեմ այնչափ յամառ ,
 Ո՞վ եղեւ պատճառ :

ՊԱՐՄԱՆ

Թռչնիկն՝ սոյլ , ոչխարն՝ մէ , հորթն՝ աւաչ ,
 Մաղիկն՝ բոյր , հողմիկն՝ սոյր , գետ՝ կարկաջ .
 Կոյսն՝ անմեղ սիրտ , պատանին՝ սէր , վարդ՝ պսակ
 Ի փառս էին խառնեն յայս սուրբ ներդաշնակ :

Օ՛ն սուր ինձ բաղուկ ,
 Փութով դնասցուք .
 Տարածամ է օր ,
 Մեզ մնան աչք մօր :
 Ոչ ես և ոչ դու ,
 Յայս դէպ ահարկու ,
 Պատճառ կամ հաւակ ,
 Անշուշտ ոչ եղաք .
 Ասեմ անաչառ ,
 Սէրն եղեւ պատճառ :



ՔՍ ՍԻՐԵԼԻԻ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄԻՍ

ՀԱՅՐ ԿՂԵՄԻՍ Վ. ՍԻՊԻԼԵԱՆԻ

ՆՈՒՐԵՄ ԶԱՅՍ ՏՈՂԵՐ

Ա.

Վ սեմ հոգիդ, դ՛ն Կղեմես վարդապետ,
Հայ հընութեանց նախամարտկաց կարապետ.
Սիպիլեան դ՛ն, Հայ նըշխարաց պերճախօս,
Ազգասիրի եղար աղբիւր մշտահոս :

Հայաստանի երեսն ամրող շըջեցար .
Զմընաց տեղ որ չկրէ քու գարշապար .
Քննեցիր դ՛ն Դավրէժ, Զուխայ, Սպահան
Փայտակարան, Արեաց երկիրն ու Սասան :

Մտար յայն հող, ոյր բռնաւոր խաբերայ,
Զանայ կուլ տալ իւր բընիկ Հայն անխնայ .
Ասեմ ի Ռուս և հոն աչերդ դիտեցին,
Շիրակ, Սիւնիք, Վաղարշապատ, խեղճ Սնին :

Ընդունեցիր էջմիածնայ եւս հիւրոյթ,
Լաւ գննեցիր Վրահայոց սովորոյթ,
Տիգրիս, Ախալցք քեզ եւս չեղան անձանօթ,
Յորս հայութեան հետոյ անշուշտ տայիր օթ :

Այլ նըր թողունք Տաճկահայոց քաղաք, Գիւղ,
Բերդ, բերդամուր, աւան, կամուրջ, նոյն խակ հիւղ .
Ուր որ Հին կար, հոն դիմէիր փոյթեռանդ,
Դժուարութեանց ունելով ժոյժ անվրկանդ :

Վասպուրական և Արարատ մեծ աշխարհ,
Քու արշաւիդ սիրով բացին ճանապարհ .
Նոյնպէս Կարին, Վան, Երզնկայ և Բաբերդ,
Կարս, Մուշ, Ուրհա, յուսկ Տիգրանայ դաստակերտ :

Հեղահամբոյր, համեստ բանիւ անտրտունջ,
Քեզմով լեզու առնոյր ազգին այդ հին մունջ .
Եւ պատմութիւն հայուն վշտաց աղեկէզ,
Համեստ աչօք և անվաստակ տայիր մեզ :

Իւրաքանչիւր ընկերութիւն հայկական,
Ըզքեզ իւրեան անդամ ունէր պատուական .
Եւ օտարաց հնազէտներ հիասքանչ,
Ի հեռուստ քեզ դային խանդիւ տալ ականջ :

Քու հօտիգ ալ իրր անձնուրաց հովիւ քաջ,
Սիրտդ ունէր գուժ, լեզուդ ըստիփ, ուսըդ խաչ .
Իբբը մուրող որ ողորմի անձանձիր,
Ճոխին տունէն աղքատին հիւղ մշտնէիր :

Տիգրանակերտ, Տիգրանակերտ, դու անգուժ .
Մեր չքնաղ որթն այսպէս առնեն այգեկուժ .
Դու մեղադրես ըզ Սեւերեկ, դիտեմ ես,
Բայց քեզ ի բոյժ դիմեյ մեր հայրն Կրղեմէս :

Գուժկան քաղաք, քու հին տիրոջ խրմորէն,
 Չյարուցիր դեռ հայութեան ազաւէն.
 Ամօթ քեզի, որ արդեանց մէջ անճարակ,
 Հսպառելու հանդիսանաս ճամարտակ:

Բ

Գիտցար անշուշտ հայ հընախօսդ Սիպիլեան,
 Թէ ժամանակ և պատահարք բընութեան,
 Ինչ որ էր սին, ինչ որ վստմ անխըտիր,
 Ի փոր երկրի թաղեցին գող անյարիր:

Հընախոյզ մը, որչափ ըլլայ կուռ ներհուն,
 Միշտ կարօտ է հարցեր ընել Անցելոյն՝
 Բայց ուր գտնել հոս Անցելոյն խոր անդունդ,
 Ում բիւրաւոր դարուց դարեր են սընունդ:

Այս պատճառներ դըրին ըզքեզ ի դամբան,
 Որ այդ անհազ անհուն վըհին է բերան,
 Ոյր ժանիքներ միշտ ըզ ներկայն ժիր ծամեն.
 Որ զԱպագայն՝ նոր, և զՆերկայն հին գործեն:

Այս պատճառներ, ասեմ, դրին ի շիրիմ,
 Երթալ ըլլալ արքայից իսկ մտերիմ,
 Հարցանել թէ ուր պահեցին իրենց Հին,
 Այն Հինն որ սերկ Հայուն է պինդ սիրելին:

Աւաղ, երթաս փարատել քու տարակոյս,
 Բայց Հայն յաւէտ կորուսանէ իւր մեծ յոյս.
 Ձի Սարովպէ, զով որ ընէ նահատակ,
 Անդառնալի կուլ տայ ըզնա ժամանակ:

Հնութեանց հընոյն այդ անցելոյն ի խնդիր,
 Իբր հեռազօտ թէեւ իջար ի նատիր,
 Բայց էն ըզքեզ, գիտեմ, դրաւ ի Ձենիթ,
 Ի վարձ բարեաց զորս մատուցիր քու Ազգիդ:

Ըզձիցըզ է այդ Ձենիթը, այնպէս չէ,
 Ոյր Հորիզն զաշխարհն Հայոց ընդգրկէ.
 Աստուած տուաւ զայդ քեզ յատուկ հանգրուան,
 Մորորակ Հայն լաւ զննելու գիտարան:

Թող ասէ ինձ ուսումնագէտ քու հոգին
 Որ արդ տեսնէ թէ Անցելոյն, թէ Ապառնին,
 Այդ միլորակն խաւարելու ունի մէտ.
 Թէ ոչ, երբ է իւր փրկութեան մերձակէտ:

Միտ դրէք Հայք, լըսեմ ես իւր հեզիկ ճայն,
 Նոր Մարդն հնոյն փորձիւ ասէ, եթէ Հայն,
 Ուսման դէմ ՄՍՐՁ ելեքարածայր չը դնէ,
 Անհընար է որ Ապագայն ԼՈՅՍ հանէ:



Ի ՄԱՀ

ԹՈՎՄԱՍԻ ԲԷՔՄԷՉԵԱՆ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏԻ

1878 ԴԵԿՏԵՄԲԵՐ 5



ՆԵՐՇԱՊՈՒՀ

Բարի լոյս Ձեզ, աշակերտք իմ սիրելիք,
 է՞ր խմբեալ էք, է՞ր այսպէս կաք դասաւիք,
 — Ո՛հ կ'ասեն թէ, Թովմաս ընկեր մեր մեռաւ :
 — Ի՛նչ, ո՛վ գուժեց նորա կենաց այդ գրաւ :
 Ո՛չ, չէ մեռած, ողջ է կարիճ իմ Թովմաս,
 Անոր աչերն Մորիէոսին տան սպաս :

Եկէք իմ հետ ըլլանք իրեն այցելու,
 Որ տարակոյսն զիւր մթին քող շուտ ցերու :
 Աստ կենանք, աստ անկողնոյն շուրջ, բոլորչի,
 Լուռ, զի Մորիէ խուն աղմուկէ իսկ խորչի :
 Ո՛չ, չէ մեռած, զի մտածէք դուք ի շեղ,
 Խորին խոհեր խոնուած են յիւր ուղեղ :

Տեսէք զիւր դէմ, մարուաց թերեր նորաբոյս,
 Խոհուն յօներ, ճակատ բարձր բարեյոյս,

Երկու ձեռքեր կուրծքին վրայ խաչաձեւ,
 Ախդին շուսին խաւարած է զիւր արեւ :
 Բայց ոչ յաւէտ, զի պահ մ'ետեւ նա պարզի,
 Հողին ի կեանս, աչերն ի լոյս արծարծի :

Արի սրբաող, չքնաղ վարուք, բարեմոյն,
 Ի լեզու քաջ, յուսմունս է բարձրադոյն :
 Մրտին մէջ միշտ վառ է ազգին սիրոյն խանդ,
 Եւ ուր որ կայ աղատութիւն, ինքն է անդ :
 Ոչ, չէ մեռած

(Մեռելաբարձի ծօրենան)

Ո՞վ են ասոնք, ինչ կուղէք դուք սեւ մարդիկ,
 Մահու ծառայք, ժանտ պաշտօնեայք, չխօսիք :
 Ձեր տիրոջ պէս դուք եւս խուլ էք, անողորք,
 Օ՛ն անդր ի բաց, չիք ատ ընաւ մեռնող ոք :
 Կենաց որդիք, ինչ կեցեր էք տրտմազին,
 Դուք, մեծ Սանունք Լուսաւորչեայ դպրոցին :
 Վանեցէք դուքս Ադրովպեայ այս ծառաներ,
 Ձի ձեր դրկէն կամին խլել Ձեր ընկեր :
 Ոչ, չէ մեռած, արի ընկեր Ձեր Թովմաս,
 Բոյր դու, Եղբայր, ընդէր ողբայք, Հայր, զի լաս :

ՀԱՅՐ

Ներշապուհ դու, իմ Թովմասիս վարժապետ,
 Այս է ուրեմն քու ուսուցած աշակերտ :

Գիշերն է լոյս հարցեր բրի, քննեցի,
Մահու չափ խուլ, ագէտ գտայ, վայ ինձի:

ԵՂԲԱՅԻՐ

Աչերս եղբօրս աչաց ուղղած անընդհատ,
Յայգ շարժեցին զինքը ձեռքերս անհաւատ:
Այս էր ուրեմն այսչափ երկոց յուսկ օճան,
Այս եւս լիցի քիչ ատենէն իմ վախճան:

ՔՈՅԻՐ

Շունչս հատաւ թովմաս, թովմաս կանչելով
Չայնս սարսեց երկնից աստղեր հառաչով:
Աչերս չորցան, ալ չմընաց արտասուք:
Կարծեմ, մեր տուն շուտ ունենայ երկու սուգ:

ՆԵՐՉԱԳՈՒՆ

— Մեզ պարտութիւն, միշտ մահուն է յաղթութիւն,
Իւր կառք չուէ, Ատրովպ եթէ զիւր հերիւն:
Թաղիս Հայուն Եկեղեցեաց զանգակներ,
Ճարտարք ի գոյժ չմընացին անտարբեր:

Մեծ Ապունս արար Լատին առաջնորդ,
Իւր կղերօք յուղարկութեան էր ուղղորդ:
Զի լուսամիտ մեր թովմասին երկնից բաղդ
Վիճակեցաւ արարացւոյն ի գրախտ:

Ութ պարմաններ, ոյց մէն մի ձեռք կար ի ջահ,
Եւ այլք ի ծոպ, բոլորէին մահուան գահ:
Թաթք կրէին ճերմակ ձեռնոց, իսկ շղարշ,
Ծածանէր յօդս ծալ, ծալ ի սուգ աղեխարշ:

Ուսանողաց պար հետեւէր ի դագաղ,
Ամբոխն անթիւ գնայր յուղարկ խիստ դանդաղ:
Եւ երբ տարինք ի Բերա շուքն հանդիսիս,
Մեր ստուերներ ճիշտ հայէին ի Հիւսիս,

Բանիւ համբոյր թովմասին տալ ցաւ ի սիրտ,
Պատրաստ էին իւր ընկերներ լաւ ի կիրթ:
Բայց երբ Լատին Տաճարէ մը գուրս ելանք,
Պարկէից զսհն անյայտ եղաւ, մեծ զարմանք:

Ես անհամբեր գոչեցի բարձր, ուր տարին,
Ուր տարին, ուր, բոլոր Հայեր ձայնեցին:
Ալ մեզ համար ստոյգ մեռաւ, բիւր աւաղ,
Յաչս ցօղաթուրմ անձնիւր գնաց յիւր դբաղ:

Բայց չէ մեռած ճիշտ Հայ թովմասն իմ ապրի:
Զի այս սողեր յիւր արդադիր գրեցի:

ԱՐԵՊ.Ա.ԿՆ

Ի ԼՈՅՍ



Ա.

Վեհ յամեն դէմս, դու իմ Արփի գեղալոյս,
Առաւօտ ջինջ մինչ 'ի քոյդ գարձ բարեյոյս :

Ի շարս աստեղց փայլիս գեղով մենապանծ,
Շուտ քարշես քեզ մուրափիս ձգման դսանձ :

Բոպէք կենացս ընդ քո շրջանս են առինչ,
Ի տես այգոյդ իսկոյն ցրուին իմ վիշտ, նինջ :

Ժիր դու, մինչդեռ սրտի՛ խնամ ուղղես շող,
Իցէ հնար թէ իւրն քեզ չեցէ ցող :

Իբր աստղադէտ այգուն՝ ծագմանդ ակնապիշ,
Եւ 'ի մուտ քո տխուր լքման դիտեմ՝ նիշ :

Նա՛ գիշերն հաս . լուռ Հորիզոն, մարդ 'ի քուն,
Խոհք իմ մասց, աչք իմ 'ի քեզ կան արթուն :

Բ

Ի ԽՍԻԱՐ

Յուսկ ուրեմքն նախանձընդդէմ այն Լուսնակ,
Զքոյդ յինէն ծածկեսցէ դէմ սիրունակ :

Իմ հէգ հոգի անյոյս, անճար, զուրկ 'ի քէն,
Ի մարմին իմ մի՛ մընասցէ ապաքէն :

Եւ երբ ըզքեզ այդ արբանեակ ապերախտ,
Յայցելութիւն այլ աստեղաց թողցէ գաղտ :

Մի՛ դու նիւթեր . մի՛ դու ջանար վշտաբեկ,
Այլ եւս անզօր քոց է շողից երթեւեկ :

Երբ իմ ոսկերք ընդ հող դիցին ամրափակ,
Յուրտ վէմն և գիրս քեզ լիցին սուրբ յիշատակ :



ՊԱՏԱՆԻՆԻ ՀՈՂՄՆ



ՊԱՏԱՆԻ

Սիրուն հողմիկ , ընդէր այսօր
Անուշ փշես քան զամեն օր .
Շնորհ , միթէ լի ես ծաղկօք ,
Թէ 'ի սահիլդ տեսեր զայլ ոք :

ՀՈՂՄՆ

Տեսի մի կոյս աստ 'ի պարտէղ,
Կոյս գեղեցիկ պարկեշտ ու հեղ,
Եւ խլեցի ես անոր բոյր ,
Շէկ այտերուն տալով համբոյր :

ՊԱՏԱՆԻ

Ո՛հ , նախանձիմ
Ոխայ սիրտ իմ .
Գնա՛ , հողմիկ ,
Այլ չես քաղցրիկ .
Ծաղիկ շոյես ,
Կոյս փայփայես .
Սէրըն այսպէս .
Դու վայելես :

Հէք պատանի , դու դեռ մատաղ .
Բայց չեք 'ի քեզ սրտիկ խաղաղ .
Շոյեմ վարդեր , շոյեմ այտեր ,
Աղքատն ու ճոխ բանան ինձ սէր :

Մահուն եմ ես , ուժդին , թեթեւ ,
Ինձ ընութիւն ետ զայս պարգեւ ,
Ա՛հ , ո՛ւր էր թէ տար ինձ լեզու ,
Կոյսն երգէի ամեն առտու :

Կենացս օրեր են երկրի չափ ,
Արկած ու փորձ ունին անչափ .
Թէ և մարդիկ ամեն վայրկեան ,
Ի վեր , յերկինս՝ ըէր , սէր , կարգան :

Բայց ես իբրեւ անուս տղայ ,
Այսչափ ատեն հաղիւ կրցայ .
Տերեւ , ճիւղեր յիմ փայփայել
Սիրոյ առջի գիրըն հնչել :

Քնքուշ մանկան մայրըն գլթած .
Օրօրոցին քով միշտ նստած .
Սիրոյ երկրորդ գիրըն հնչէ .
Երգելով միշտ է , է , է , է :

Դեռ յաստէից ոչ ոք երգեց ,
 Սիրոյ վերջին նշանախեց .
 Դու որ դեռ ոչ գիտես զայր բեհ .
 Կամիս երգել զՍէրն ամեն :



ԱՌ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ՈՄՆ

Այսպէս միակ ,
 Թէ եւ քառեակ
 Գործողութիւն ,
 Ի գիտութիւն
 Թուրման , չափման
 Գեղ բանական .
 Զլինի բաւ ,
 Հանել համբաւ :



Խ Ր Ա Տ

ԱՌ Բ



Զքնաղ փիւնիկ է անունդ ,
 Մոխիրներէն քո ծնունդ ,
 Թռար , բարձրեր կաս ՚ի դառ .
 Զի քեզ վայել չէ մացառ :

Դիցուհիէ ունիս սեր ,
 Զի աչքդ ունի շանթ ու սէր .
 Շանթովդ զարնես , դեղանի ,
 Սիրովդդ տաս սպեղանի :

Երգերդ թէ և անձանձիր ,
 Բայց դժուարաւ ուսնէիր .
 Իսկ քու շեղովին ժիր դայլայլ ,
 Երգչիդ սրտին տայ զմոլ :

Բարձր է այն դառ յոր դու կաս ,
Եւ յոր պարծիս անպակաս .
Բայց երբ սահի 'ի քէն բաստ .
Ո՞վ տացէ քեզ հօր նպաստ :

Երգչիդ կրթանք ու խրատ ,
Մեծ ուշով ան 'ի նկատ .
Որ ունենաս ապագայ ,
Եւ զարդ՝ ՊՍ Կ մշտակայ :

1859



